ՎԱՐԴ

Վարդն է բացուեր առաւօտուն գոյն զգոյն,
Հոսան բուրէր անմահութեան զօրն ի բուն,
Խիստ գեղեցիկ նման ծաղկի նրբանենոյն նրբանենոյն.
Մի թափիր վարդ, մի թափիր վարդ
Խիստ այրեցայ ես քո հոտոյն
Մի լափիր վարդ խիստ այրեցայ ես քո սիրուն
Մի լափիր վարդ։
Առաւօտուն ժամուն ելայ հայեցայ,
Յորժամ տեսայ վարդ բացլուած՝ զուարճացայ,
Խիստ անուշահոտութենէդ զմայլեցայ զմայլեցայ։
Մի թափիր վարդ ևն։
Բամից հանուրց աղգաց ի մէջ ծաղկունաց,
Գերագոյն վարդ դու ցանկալի ես մանկանց,
Մի պակասիր վարդ հանապազ իմ ձեռաց,
Մի պակասիր միշտ հանապազ իմ դիմաց.
Մի թափիր վարդ ևն։
Դու բարունակ պայծառ և ծիրանագոյն,
Բուրաստանաց մէջըն փայլիս ասողագոյն։
Վարդ սիրական անուշահոտ կարմրագոյն,
Իմ գեղեցիկ անուշահոտ կարմրագոյն.
Մի թափիր վարդ ևն։
Առաւօտուն հոլմն հնչէր մեղմագոյն,
Պուլպուլ ձագուկն գայր իջնոյր մէջ վարդոյն,
Պուլպուլ հաւիկն գայր իջնոյր մէջ այգոյն,
Քաղցրիկ խօսէր ւ՚ուրախանայր հետ վարդոյն.
Մի թափիր վարդ ևն։

Նոր առաւօտ արեգական ծագելոյն,
Յայնժամ ի շուրջ գալով մէջըն վարդենոյն,
Եղանակօք շարադրեցի քաղցրագոյն.
Մի թափիր ևն։
Ի հասանել երրորդի ճաշու ժամուն,
Կրկին անգամ ընթացայ մէջ կոկոնուն,
Վարդ քաղելով ոչ յագեցայ ի հոտոյն.
Մի թափիր ևն։
Էր ժամանակն հասարակ աւուր տոթոյն,
Վարդ թըփենոյդ ներքև եղէ քաղցր ի քուն,
Վարդ թափեցար ի վերայ սրտիս բաղմագոյն.
Մի թափիր ևն։
Աղուորիկ վարդ կու բուսանիս մէջ փըշոյն,
Աղուոր մանկտիք գան ժողովեն քո ճըզոյն,
Ջեռվընին ծակոտես որպէս զէտ հերուն,
Մի թափիր ևն։
Սըրտովս յօժար զքեզ գովեմ վարդ սիրուն,
Սիրելի նազելի պատուականագոյն
Ոչափ գովեմ՝ արժանի ես բաղմագոյն,
Մի թափիր ևն։
Այլ և բաղմեալ, եղբարք, ի շուրջ սեղանոյն,
Ի միասին հըրճուիմք ի վերայ վարդոյն,
Դրախտէն ընծայ բերեալ հօրըն նախնոյն,
Մի թափիր ևն։
Ցնծան մանկտիք ուրախանան քո տեսոյն,
Առեալ միմեանց մատուցանեն սիրելոյն,
Այլ առաւել սիրով լցեալ աւելնուն,
Մի թափիր ևն։
Ես թըմրեցայ վարդի անուշահոտոյն,
Ջինչ խօսեցայ՝ անգէտ և յիմարագոյն,
Որըն մարմնոյ՝ որըն հոգևորագոյն,
Մի թափիր ևն։
Այլ մանկտիք որք էք ինձ եղբայրագոյն,

Յորժամ կարդայք զիս յիշեցէք ձեր հոգոյն,
Հայր մեղայն մի խնայէք ձեր արևուն,
Մի թափիր ևն։
Լինիմ կարօտ՝ մնամ փափագ քո տեսոյն,
Վարդ պակասեալ լինիս ի մէջ փրշենոյն
Եւ զիս թողուս խեղճ ւ՝ողորմուկ տրրտմագոյն,
Մի թափիր ևն։
Քո ժամանակն պիտէր խիստ երկարագոյն,
Որ զուարճացեալ լիանայի քո հոտոյն,
Գոհութիւն փառք տայի ստեղծող Աստուծոյն Աստուծոյն։
Մի թափիր ևն։
Սա յարմարեալ թուականի մեծ Հայուն,
Հազար հարիւր ութերորդ աւելորդոյն,
Ճանապարհին յերուսաղէմայ գալուն,
Աբեղայի ծոյլ Վարդան անուանելոյն,
Մի թափիր ևն *։

---

*. Սկզբնատառք կազմումեն՝ Վարդանի է ասացեալքս։